ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 մայիսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

66
(2732)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ ԴԱՐՁՅԱԼ ԱՐԴԻ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանն արդեն տեւական ժամանակ է՝ մեկուսացել է իր թիմակիցներից՝ ՔՊ-ականներից, գրեթե ոչ ոքի հետ չի շփվում, շփվելիս էլ խիստ զգուշավոր է: Եթե անգամ ՔՊ-ականները նրա հետ քննարկելու որեւէ հարց են ունենում, դիմում են նրան, Պապիկյանը խուսափում է թիմակիցների հետ հանդիպումներից, նրանց պատասխանում է կարճ-կոնկրետ՝ թող մնա, հետո կքննարկենք, հետո կտեսնենք: ՔՊ-ականների համար տարօրինակ է Պապիկյանի այս պահվածքը, քանի որ վերջինս մշտապես լավ հարաբերություններ է պահպանել թիմակիցների հետ, փորձել է տարաձայնությունները հարթել թիմի ներսում. հիմա փոխվել է:

«Ժողովուրդ» օրաթերթը որոշ ժամանակ առաջ գրել էր, որ Նիկոլ Փաշինյանը նպատակ ունի պաշտոնից հեռացնել Պապիկյանին, քանի որ վերջինիս մեղադրում էր ՔՊ վարչության ընտրությունները կեղծելու, կուսակցության վարկանիշի հետ խաղալու համար, սակայն դա որեւէ կերպ չի հաստատվում:

Պապիկյանի պաշտոնանկության մասին լուրերը իսպառ փակվեցին, քանի որ Փաշինյանը այլ թեկնածու չուներ եւ առաջարկեց պաշտպանության նախարարին մնալ եւ շարունակել աշխատանքը:

Իսկ այս օրերին ՔՊ-ում չեն բարձրաձայնում, առերեւույթ ցույց չեն տալիս, բայց Փաշինյանի օրակարգում արդեն տեւական ժամանակ է՝ Պապիկյանի հեռացման հարցն էլի կա, պարզապես նրան դեռ փոխարինող չեն գտնում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեկ Երեւանի ավագանու «Իմ քայլը» խմբակցության ղեկավար կազմը հավաքվել, նիստ է արել, քննարկել աշնանը կայանալիք Երեւանի ավագանու հերթական ընտրությունների հարցը: Այսպիսով, տեղեկացանք, որ քննարկման արդյունքում որոշում է կայացվել ընտրություններն անցկացնել սեպտեմբերի 17-ին: Բացի այդ, ավագանու անդամները քննարկումների արդյունքում եկել են այն եզրակացության, որ մինչեւ սեպտեմբեր եղած ժամանակահատվածը պետք է ակտիվ օգտագործել եւ նախապատրաստվել աշնանը կայանալիք ընտրություններին: Ինչպես հայտնի է, ՔՊ ավագանու ցուցակը գլխավորելու է Տիգրան Ավինյանը, որն այժմ փոխքաղաքապետ է: Սպասվելու են թեժ ընտրություններ, քանի որ արդեն իսկ մեծ թվով կուսակցություններ են ընտրություններին մասնակցելու ցանկության մասին հայտարարել: Թերեւս դա է պատճառը, որ ղեկավար կազմը որոշել է կազմակերպել ավագանու ներկայիս անդամների ակտիվ ներգրավվածությունը հերթական ընտրություններին, եւ այդ պատճառով որոշվել է, որ ավագանու՝ արձակուրդ գնալուց հետո պետք է սկսվեն ակտիվ հանդիպումներ եւ քարոզարշավ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրուցում Երեւանի ավագանու «Իմ քայլը» խմբակցության ղեկավար Արմեն Գալշյանը նշեց, թե նման քննարկում չի եղել, բայց մեր աղբյուրները պնդում են, որ նման քննարկում նեղ շրջանակում եղել է:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը համակարգը լցրել է իր հավատարիմներով: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայկ Գրիգորյանը, որը ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության պետն է, 2002-2009 թթ. աշխատել է Երեւան քաղաքի վարչության Շահումյանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազոր, ավագ օպերլիազոր: Նկատենք, որ այդ ժամանակ Սասուն Խաչատրյանը եղել է Մալաթիա-Սեբաստիա համայնքի դատախազության քննիչ, հետագայում՝ դատախազ: Այսքանով ամեն ինչ չի ավարտվում: Այս տարվա փետրվարի 17-ին նրա տեղակալ նշանակվեց Արտակ Պողոսյանը, որի մտերիմ կապը եւս գալիս է շատ խորքից: Պողոսյանը 2002-2007 թթ. ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազոր, ավագ օպերլիազոր է եղել եւ հետագայում նույն բաժնում այլ պաշտոններ է զբաղեցրել: Ավելին՝ Հակակոռուպցիոն կոմիտեում տարածված լուրերի համաձայն՝ օպերատիվ հետախուզության վարչության գրեթե բոլոր օպերները Մալաթիայի բաժնի աշխատակիցներ են, որտեղ էլ նախկինում աշխատել է Սասուն Խաչատրյանը:

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը ձեռք կբերի գրասենյակային գույք ու համակարգչային սարքավորումներ: Նախագծի հիմնավորումից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է, որ այս գնման անհրաժեշտությունն առաջացել է աշխատակազմի տեխնիկական հագեցվածության եւ տրանսպորտային միջոցների ապահովվածության բարելավման համար: Այսպիսով, վարչապետի աշխատակազմը ձեռք է բերել վարագույրներ, քիվեր, հեռուստացույցներ, աթոռներ, բեռնատարներ, դրոշակաձող: Այս նպատակով առաջարկվում է աշխատակազմին պետական բյուջեից գումար հատկացնել: Տեղեկացանք, որ խոսքը 37 մլն դրամի մասին է, որից 15 մլն դրամը կուղղվի տեխնիկական հագեցվածության բարելավման համար, իսկ 12-ն էլ՝ ընդհանուր նշանակության մեքենաների ու սարքավորումների վերանորոգման համար:

ԱԼԻԵՎԸ ՇՏԱՊՈՒՄ Է

ԻՆՉ ՍՊԱՍԵԼ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻՑ

Հայաստանը եւ Ադրբեջանը տեւական ժամանակ է՝ ինտենսիվ բանակցություններ են վարում: Շուրջ չորս օր Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները բանակցեցին Վաշինգտոնում, իսկ արդեն մայիսի 14-ին Բրյուսելում է սպասվում հանդիպում՝ երկրների ղեկավարների մակարդակով: «Ժողովուրդ» օրաթերթը քաղաքագետ Հրանտ Մելիք-Տեր Շահնազարյանի հետ ամփոփել է վաշինգտոնյան բանակցությունների արդյունքները: Քաղաքագետի հետ զրուցել ենք նաեւ Բրյուսելում սպասվող հանդիպման մասին:

-Պարոն Մելիք-Տեր Շահնազարյան, ի՞նչ սպասել այս բանակցություններից, Բրյուսելում սպասվող հանդիպման արդյունքում նոր փաստաթուղթ կլինի՞:

-Լավ բան պետք չէ սպասել այդ հանդիպումներից. ակնհայտ է, որ պաշտոնական Երեւանն անկեղծ չէ հանրության հետ, մի բան հայտարարում, մեկ այլ բան անում է: Վաշինգտոնում հայտարարեցին, թե կարեւոր հարցերի շուրջ պայմանավորվածություն ձեռք չի բերվել, բայց դրան հետեւում է երկրների ղեկավարների մակարդակով հանդիպում. սա նշանակում է, որ արտգործնախարարներն արդեն ինչ-որ բան պայմանավորվել են եւ նախապատրաստել են երկրների ղեկավարների հանդիպումը: Իմ կարծիքով՝ Ալիեւը շտապում է հիմա, հասկանում է, որ Թուրքիայի նախագահական ընդրությունների արդյունքները զգալիորեն կարող են ազդել իր դիրքերի վրա, եւ հիմա փորձում է մինչ այդ օրը հնարավորինս շատ զիջումներ պոկել Հայաստանից: Մեր իշխանություններն էլ մեծ հաճույքով սպասարկում են Ալիեւի շահը, ամեն ինչ անում են, որ Ադրբեջանի իշխանությունները հանկարծ իրենց օրակարգից հետ չմնան, ամեն ինչ ժամանակին հասցնեն անել: Ուստի սպասելիքը հերթական հանդիպումից բացասական է միայն. ինչ պայմանավորվում են Երեւանը եւ Բաքուն, հօգուտ Ադրբեջանի են բանակցում եւ ի վնաս Հայաստանի: Այս ընթացքում որեւէ պայմանավորվածություն չի եղել, որտեղ հայկական շահ լինի. այսքանից հետ էլ ի՞նչ սպասենք հանդիպումներից, սպասենք պետության թուլացման, մեր միջազգային դիրքերի ավելի թուլացման, Ալիեւի ագրեսիվ քաղաքականության ակտիվացման. այլ սպասելիքներ Նիկոլ Փաշինյանի կամ իր թիմակիցների հանդիպումներից չկան: Նրանք չեն սպասարկում Հայաստանի շահը, այլ նվագակցում են Ադրբեջանին եւ օգնում են, որ Ադրբեջանն իր խնդիրները լուծի:

-Իսկ ո՞րն է Ադրբեջանի պահանջների մաքսիմալ սահմանը:

-Դժվար հարց է. կա տրամաբանական սահման, այդ սահմանն Ադրբեջանը վաղուց անցել է, կան նաեւ անտրամաբանական սահմաններ՝ ընդհուպ մինչեւ տարածքային պահանջներ Հայաստանից՝ Սյունիքում, Տավուշում կամ Գեղարքունիքում: Այսինքն՝ Ալիեւը սահմաններ չի տեսնում, քանի որ իրեն դիմադրող չկա: Եթե նա կարողանում է առաջ գնալ, ու որեւէ մեկը չի դիմադրում, ի՞նչը պետք է նրան ստիպի կանգ առնել՝ բարոյական սահմանն՞ը, թե՞ հագեցվածության զգացումը: Իրենք առավելագույնն են փորձում առաջ գնալ: Այս պահին Ադրբեջանը մի քանի խնդիր է փորձում լուծել՝ առաջինը՝ որ Արցախի հարցը վերջնականապես փակվի, ընդ որում՝ Հայաստանի հետ լուծել են այս հարցը, հիմա բուն Արցախում կամ միջազգային հանրության ընկալումներն են փորձում փոխել, որպեսզի կարողանան դա որպես խաղաղութուղթ օգտագործել Ռուսաստանի եւ Արեւմուտքի հետ բանակցություններում: Փորձում են նաեւ Սյունիքով միջանցքի հարցը լուծել եւ ավելի բարենպաստ դիրք գրավել բանակցային գործընթացում:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՆԻՍՏԵՐ ԿԱՆՑԿԱՑՆԵՆ

ՔՆՆԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՆ

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներն առաջիկա օրերին նիստեր կանցկացնեն: Այս շաբաթ երկու հանձնաժողովներում են նիստեր սպասվում: Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում երկրորդ ընթերցմամբ կքննարկվի «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին» օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը: Իսկ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նիստում կրկին երկրորդ ընթերցմամբ քննարկվելու է «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին հարցը: Հաջորդ շաբաթ եւս խորհրդարանում հանձնաժողովների նիստեր կլինեն:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ մայիսի 15-ին նիստ կլինի Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովում: Այդ օրը կքննարկվի «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին հարցը:

Նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ փոփոխության արդյունքում կնախատեսվեն անհրաժեշտ իրավական կարգավորումներ պարեկային ծառայության ջրային ստորաբաժանման ծառայողի կողմից իր պարտականությունները պատշաճ կատարելու համար: Պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովը եւս մայիսի 15-ին նիստ կանցկացնի: Օրակարգում առկա երեք հարց կքննարկվի առաջին ընթերցմամբ, երեք նախագիծ էլ՝երկրորդ: Դրանցից մեկով՝«Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին նախագծով, առաջարկվում է քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին տալ հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսի չափով: Նշենք, որ ՔԿ նախագահի պաշտոնային դրույքաչափը կազմում է 998 հազար 200 դրամ, եթե գումարենք 92 տոկոս ամսական հավելավճարը՝ 918 հազար դրամը, ապա ստացվում է, որ նա կստանա 1 մլն 916 հազար դրամ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՉԵՂԱՐԿԵԼ Է ԱՅՑԱԳՐԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հրամանագիր է ստորագրել 2023 թվականի մայիսի 15-ից Վրաստանի քաղաքացիների համար այցագրային ռեժիմը վերացնելու վերաբերյալ: Այդ մասին «Արմենպրես»-ը տեղեկանում է Sputnik գործակալության վրացական ծառայությունից:

Ռուսաստանը Վրաստանի քաղաքացիների համար այցագրային ռեժիմը սահմանել է 2000 թվականին, սակայն Ռուսաստանի քաղաքացիներին Վրաստան մեկնելու համար այցագրեր հարկավոր չեն. Վրաստանն այցագրային ռեժիմը միակողմանի կարգով վերացրել է 2012 թվականի սկզբին:

Հրամանագրի համաձայն՝ Վրաստանի քաղաքացիները կկարողանան մուտք գործել եւ մեկնել Ռուսաստանից առանց այցագրերի ձեւակերպման, իրենց ինքնությունը հաստատող վավերական փաստաթղթերի հիման վրա (Վրաստանի քաղաքացու անձնագիր, դիվանագիտական անձնագիր, ծառայողական անձնագիր, նավաստու գրքույկներ, ուղեւորության փաստաթուղթ՝ Վրաստան վերադառնալու համար):

Պուտինի հրամանագրի համաձայն՝ բացառություն են հանդիսանում այն քաղաքացիները, որոնք Ռուսաստան են մուտք գործում աշխատանքային գործունեություն իրականացնելու կամ 90 օրից ավելի ժամկետով բնակվելու, այդ թվում՝ կրթություն ստանալու նպատակով:

Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ դիվանագիտական հարաբերություններ չկան: Վրացական կողմը խզել է դրանք 2008 թ.-ի օգոստոսյան հակամարտությունից հետո, երբ Մոսկվան ճանաչեց Աբխազիայի եւ Ցխինվալի տարածաշրջանի (Հարավային Օսիա) անկախությունը:

ԲՈՒՀԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

ArmLur.am-ի հավաստի աղբյուրների փոխանցմամբ՝ կառավարությունը լայն թափով սկսել է բուհերի տեղափոխման եւ օպտիմալացման նախագծերի իրականացումը: Ըստ մեր տեղեկությունների՝ կառավարությունը մշակել է հինգ ուղղություն, որով պետք է բաշխվեն բուհերը. դրանք են արվեստը, տեխնոլոգիաները, բժշկությունը, անվտանգությունը եւ կրթությունը: Ավելին՝ ըստ մեր տեղեկությունների՝ այս պահին որոշվել է, որ մայրաքաղաքում մնալու են միայն Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը եւ Երեւանի պետական համալսարանի ադմինիստրատիվ հատվածը: Մնացած բոլոր բուհերը տեղափոխվելու են մարզեր: Մեր աղբյուրները փոխանցում են, որ այս հարցը շատ գաղտնի ձեւով է քննարկվում կառավարությունում, ու այն գլխավորում է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը: Իշխանությունները այս հարցը, կարելի է ասել, իրենց համար արդեն լուծված են համարում, ներքին որոշում ունեն, դրա մասին կհայտարարեն այն ժամանակ, երբ արձակուրդային օրերը կսկսվեն տարբեր բուհերում: Հիմա ներքին հարցերի քննարկման փուլում են. թե առաջիկայում այս հարցը ինչ փուլ կմտնի, դժվար է ասել, քանի որ մեկ անգամ արդեն այս հարցով ուսանողներն ու դասախոսական անձնակազմը ոտքի էին դուրս եկել:

Այս առնչությամբ ArmLur.am-ը դիմեց նաեւ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն, որտեղից մեզ հայտնեցին, որ Ակադեմիական քաղաքի շուրջ այս պահին քննարկումներ կան, այլ տեղեկություններ հայտնի չեն:

Հիշեցնենք, որ ամիսներ առաջ Երեւանի Բրյուսովի անվան պետական համալսարանի հարյուրավոր ուսանողներ դասադուլ էին հայտարարել ու բողոքի ակցիաներ էին անում՝ ընդդեմ բուհերի խոշորացման:

ՏԵՂՅԱԿ ԷՐ, ԹԵ՞ ՈՉ

«Նեմեսիս»-ի հուշարձանի տեղադրման շուրջ կրքերը չեն դադարում: Մասնավորապես, «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ Երեւանում «Նեմեսիս» հուշարձանի տեղադրման որոշումը կառավարությունը չի կայացրել, կայացրել են քաղաքային իշխանությունները, իսկ որոշումը եւ դրա իրականացումը եղել է սխալ:

Նրա այս հայտարարությունից հետո արդեն երեկ Երեւանի նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը հայտարարել է. «Իհարկե, տեղյակ եմ եղել «Նեմեսիս» հուշարձանի տեղադրման մասին: Չեմ ասել վարչապետին այդ մասին»:

Իհարկե, առաջին հայացքից Փաշինյանը փորձել է ցույց տալ, թե քաղաքային իշխանությունն ազատ է, իր որոշումներն ազատ է կայացնում,սակայն այս հայտարարությունն ինքնին տարօրինակ է հենց այն առումով, որ Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանին մեղադրում էին իշխանությունների հետ չհամագործակցելու համար:

Հիմա արդեն ստացվում է՝ Սարգսյանն էլ իր քայլերը չի համաձայնեցրել Փաշինյանի կամ նրա թիմի հետ: Այս հանգամանքը կարող ենք տարօրինակ համարել. իրականում հենց այդպե՞ս է եղել, թե՞ փորձում են մաքրել Փաշինյանի անունը:

ԻՆՉ Է ՊԱՏՄԵԼ

ԹՈՒՐՔԻԱՅԻՑ ԺԱՄԱՆԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՊԱՏՄՈՒՄ ԵՆ

Անկարայում հայկական դատվիրակության անդամների հետ ճնշարկմանը թուրքական կողմը չի դահանջել հեռացնել «Նեմեսիս» հուշարձանը: Այս մասին երեկ հայտարարել է Սեւծովյան տնտեսական համագործակցության խորհրդարանական վեհաժողովին մասնակցած իշխանական ատգամավոր Բաբկեն Թունյանը: Բանն այն է, որ Թուրքիայի արտաքին գործերի նախկին նախարար Մեւլութ Չավուշօղլուն հայտարարել էր, որ Երեւանին Անկարան ասել է՝ «եթե արձանը չհանեք, կարգավորում չէ, դեռ մի բան էլ դատասխան քայլեր կանենք»:

Ավելի վաղ Անկարան հայկական կողմի համար արդեն փակել էր իր օդային տարածքը՝ որոշումը հենց հայ վրիժառուների արձանի տեղադրմամբ պատճառաբանելով: Անկարայում անցած շաբաթ հանդիպել էին Հայաստանի ու Թուրքիայի խորհրդարանների ղեկավարները, եւ արձանի հարցը եւս քննարկվել էր: «Նշվել է, որ իրենց համար հասկանալի չէ, թե ինչպես կարելի է հարաբերությունների կարգավորման ջանքերի ֆոնին նաեւ նման հուշարձան բացել: Պարոն Սիմոնյանը պատասխանել է, որ եթե կա հարաբերությունները կարգավորելու կամք, ապա չեն կարծում, որ նման իրադարձությունները կարող են խոչընդոտ հանդիսանալ հարաբերությունների կարգավորման համար»:

Մեւլյութ Չավուշօղլուն չէր հստակեցրել՝ կոնկրետ ինչ հետեւանքներ կարող է ունենալ հուշարձանի տեղադրումը Հայաստանի համար: Մասնագետները ենթադրում են՝ Անկարան կարող է հետ կանգնել ցամաքային սահմանը 3-րդ երկրների քաղաքացիների առաջ բացելու խոստումից: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բանակցություններում Հայաստանի հատուկ ներկայացուցիչ Ռուբեն Ռուբինյանն էր հայտարարել, որ պայմանավորվածություն կա սահմանը բացել հենց այս տարվա ամռան սկզբին, սակայն իշխանական պատգամավորներն էլ տեղյակ չէին գործընթացից:

Այնուամենայնիվ, ըստ Բաբկեն Թունյանի՝ արձանի տեղադրումից հետո հայ-թուրքական հարաբերություններում առաջացած լարվածությունը հնարավոր է հաղթահարել բանակցությունների միջոցով: «Ինչ հանգուցալուծում կունենանք՝ ես չեմ կարող այդ հարցին պատասխանել, որովհետեւ այդ թեմայի մեջ բավարար ինֆորմացիա չունեմ», - ասաց Թունյանը: Անդրադառնալով Անկարայից հնչող հայտարարություններին՝ Հայաստանի Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանն ասել էր. «Արձանի տեղադրումը Հայաստանի ներքին հարցն է, եւ որեւէ մեկն իրավունք չունի դրան խառնվել»: Փոխարտգործնախարար Պարույր Հովհաննիսյանի գնահատմամբ՝ նման հայտարարությունները պետք է դիտարկել Թուրքիայում ընթացող նախընտրական գործընթացի համատեքստում:

Հայաստանի մայրաքաղաքի Օղակաձեւ այգում «Նեմեսիս» գործողության հեղինակներին նվիրված հուշակոթողաղբյուրը բացվել է ապրիլի 25-ին: Արձանն, ըստ այդ նախաձեռնության հեղինակների, պետք է հավերժացնի 1915 թվականի Հայոց ցեղասպանությունն իրականացրած երիտթուրք պարագլուխներից եւ 1918-ի Բաքվում հայերի ջարդերը կազմակերպիչներից վրեժ լուծած հայորդիների հիշատակը: Պաշտոնական Անկարան եւ Բաքուն դատապարտել են Երեւանում հուշակոթողի տեղադրումը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՍՏՈՐԱԳՐԵԼ Է ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

Վրաստանի քաղաքացիների համար վիզային ռեժիմը կդադարի գործել 2023 թվականի մայիսի 15-ից: Այդ մասին հրամանագիր է ստորագրել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը: Փաստաթուղթը հրապարակվել է իրավական տեղեկատվության պաշտոնական ինտերնետային պորտալում:

Ռուսաստան մուտք գործելու համար Վրաստանի քաղաքացիներին անհրաժեշտ կլինի անձը հաստատող փաստաթուղթ՝ Վրաստանի քաղաքացու անձնագիր, դիվանագիտական կամ ծառայողական անձնագիր, ինչպես նաեւ նավաստու անձնագիր: Ավելի քան երեք ամիս աշխատելու կամ սովորելու նպատակով Ռուսաստան մուտք գործելու համար վիզան նախկինի պես կպահանջվի:

Մեկ այլ հրամանագրով՝ նախագահը չեղարկել է ռուսական ավիաընկերությունների թռիչքների եւ դեպի Վրաստան տուրերի վաճառքի արգելքը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Գեղամ Գեւորգյանը եւ Հյուսիսային Մակեդոնիայի մրցակցային մարմնի ղեկավար Վլադիմիր Նաումովսկին Սկոպիեում մրցակցության օրենսդրության կիրարկման եւ մրցակցային քաղաքականության ոլորտում համագործակցության մասին հուշագիր են ստորագրել:

Ստորագրման արարողությունից հետո ներկայացվել է Հայաստանի մրցակցային մարմնի կողմից գործարկված e-Compete թվային հարթակը:

Այցի շրջանակում ՄՊՀ նախագահը հանդիպում է ունեցել նաեւ Հյուսիսային Մակեդոնիայի պառլամենտի փոխնախագահ Գորան Միսովսկու հետ: Քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

Ե՞ՐԲ ԵՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թուրքիայի նախագահ Թայիփ Էրդողանը մայիսի 14-ի ընտրություններից առաջ հայտարարել է, որ միշտ հավատացել է ժողովրդական, «անատոլիական իմաստնությանը»: Թուրքիայում նախագահական եւ խորհրդարանական ընտրությունները նախատեսված են մայիսի 14-ին: Էրդողանի՝ «Հանրապետական դաշինքի» միակ թեկնածուի հիմնական մրցակիցն ընդդիմադիր «Ժողովրդական դաշինքի» միակ թեկնածու Քեմալ Քըլըչդարօղլուն է: Ընտրություններին մասնակցում են նաեւ Memleket կուսակցության առաջնորդ Մուհարեմ Ինջեն եւ Ata դաշինքից Սինան Օղանը: Եթե ոչ մի թեկնածու ձայների 50 տոկոսը չհավաքի, նախագահական ընտրությունների երկրորդ փուլը կկայանա մայիսի 28-ին:

ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐ

ՁԵՌՔ Է ԲԵՐԵԼ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արարատի մարզի Մասիս համայնքի նախկին ղեկավար Ս.Հ.-ն 2007 եւ 2008 թվականներին հանցավոր գործունեությամբ հափշտակել է Մասիս քաղաքի Ազատամարտիկների 11 հասցեում գտնվող 599.7 քմ մակերեսով վարչական շենքը, դրանով ծանրաբեռնված 385 քմ մակերեսով հողատարածքը, ինչպես նաեւ Ազատամարտիկների 11/1 հասցեում գտնվող 244.5 քմ մակերեսով վարչական շենքի պահեստն ու դրանով ծանրաբեռնված 299 քմ մակերեսով հողատարածքը:

2023 թվականի ապրիլի 18-ին հսկող դատախազի կողմից Մասիս համայնքի նախկին ղեկավար Ս.Հ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (առանձնապես խոշոր չափերով գույքի յուրացումը կամ վատնումը) եւ 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով եկամուտների օրինականացումը, փողերի լվացումը):

Մասնավորապես՝ քրեական վարույթով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Ս.Հ.-ն, 1999 թվականից հանդիսանալով Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքի ղեկավարը, 2007 թվականի դեկտեմբերի 27-ին ավագանու նիստում քննարկմանն է ներկայացրել Մասիս քաղաքի Ազատամարտիկների 11 հասցեում գտնվող 599.7 քմ մակերեսով վարչական շենքը եւ Ազատամարտիկների 11/1 հասցեում գտնվող 244.5 քմ մակերեսով վարչական շենքի պահեստը նվիրատվությամբ ավագանու անդամ, «ՍԻՍ» ՓԲԸ տնօրեն Ա.Բ.-ին հատկացնելու հարցը. նույն օրը ավագանին նշված գույքերը նվիրատվությամբ հատկացրել է Ա.Բ.-ին:

Այնուհետեւ Ազատամարտիկների 11 հասցեում գտնվող վարչական շենքերը «ՍԻՍ» ՓԲԸ տնօրեն Ա.Բ.-ի անվամբ հաշվառելու համար Մասիս համայնքի նախկին ղեկավար Ս.Հ.-ն 2008 թվականի փետրվարի 11-ին ավագանու քննարկմանն է ներկայացրել նույն հասցեներում գտնվող 385 քմ մակերեսով եւ 244.5 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով Ա.Բ.-ին օտարելու հարցը. նույն օրը ավագանու կողմից կայացվել է դրական որոշում: Նախաքննությամբ պարզվել է, որ 385 քմ մակերեսով հողատարածքի պայմանագրով սահմանված գումարը Ա.Բ.-ին տրամադրել է համայնքի ղեկավարը:

Արդյունքում 48 մլն 160 հազար դրամ արժեքով գույքերը գրանցվել են ավագանու անդամ Ա.Բ.-ի անվամբ:

Այնուհետեւ Ս.Հ.-ն Ա.Բ.-ի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել Մասիս քաղաքի Ազատամարտիկների 11 հասցեում գտնվող 599.7 քմ մակերեսով վարչական շենքն ու դրանով ծանրաբեռնված 385 քմ մակերեսով հողատարածքն իր խորհրդական Ռ.Ղ.-ի անվամբ գրանցելու վերաբերյալ՝ խոստանալով իր պաշտոնավարումը դադարելուց եւ գույքերն իր տիրապետման ներքո հայտնվելուց հետո դրանք վաճառել եւ Ա.Բ.-ին փոխանցել 40 հազար ԱՄՆ դոլար, իսկ Մասիս քաղաքի Ազատամարտիկների 11/1 հասցեում գտնվող 244.5 քմ մակերեսով վարչական շենքի պահեստն ու դրանով ծանրաբեռնված 299 քմ մակերեսով հողատարածքը ցուցաբերած օգնության դիմաց թողնել Ա.Բ.-ին:

2008 թվականի փետրվարի 28-ին ավագանու անդամ Ա.Բ.-ն իր հանցակցին՝ Մասիս համայնքի ղեկավարին օժանդակելու նպատակով Ս.Հ.-ի պահանջով խորհրդական Ռ.Ղ.-ի հետ կնքել է առուվաճառքի պայմանագիր՝ 39 մլն 200 հազար դրամ արժողության վարչական շենքն ու հողամասն ընդամենը 1 մլն դրամով Ռ.Ղ.-ին վաճառելու վերաբերյալ:

2017 թվականի նոյեմբերի 7-ին Ս.Հ.-ն, երբ արդեն չի հանդիսացել Մասիս քաղաքային համայնքի ղեկավար, հանձնարարել է Ռ.Ղ.-ին նշված շենքն իր հողամասով եւ հավասարաչափ բաժիններով նվիրատվությամբ օտարել իր որդուն՝ Ա.Հ.-ին, եւ իր գործընկերոջ՝ Ար.Ս.-ի եղբայր Ալ.Ս.-ի դստերը՝ Ն.Ս.-ին:

Հսկող դատախազը 2023 թվականի մայիսի 8-ին մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ հանձնել է դատարան:

4 ԱՆՁ ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում ավարտվել է կեղծ արտարժույթ ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու դեպքի առթիվ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում նախաձեռնված, այնուհետեւ ՀՀ ՔԿ-ին փոխանցված քրեական վարույթից 4 անձի մասով անջատված մասով նախաքննությունը:

Իրականացված քննչական եւ վարութային գործողությունների ընթացքում պարզվել է, որ Երեւան քաղաքի 28-ամյա բնակիչը, իր կնոջ եւ վերջինիս ընկերուհու հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում 2022թ. հոկտեմբերից մինչեւ դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում իրացնելու նպատակով ձեռք է բերել 20 հատ «50 եւ 100 ԱՄՆ դոլար» անվանական արժեքով կեղծ թղթադրամներ, որոնք փոխադրել եւ պահել է իրենց կողմից վարձակալած բնակարանում:

Այնուհետեւ 28-ամյա տղամարդը հիշյալ կեղծ արտարժույթներն իրացման նպատակով պահելու եւ դրանց իրացման միջոցով գույքային օգուտ ստանալու վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերել կնոջ հիշյալ ընկերուհու հետ, որի շրջանակներում 2022թ. դեկտեմբերին կեղծ թղթադրամներն իրացրել է վերջինիս՝ դրանք այլ անձի իրացնելու եւ գույքային օգուտ ստանալու նպատակով:

Վերջինս նշված կեղծ թղթադրամները փորձել է փոխանակել տարադրամի փոխանակման սարքի միջոցով, սակայն ձախողվելուց հետո դրանք իրացրել է իր մտերիմ, Երեւան քաղաքի 31-ամյա բնակչին:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ նշված չորս անձանց մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 267-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Երեք անձի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չբացակայելու արգելքը, իսկ մեկ անձի նկատմամբ՝ կալանավորումը:

Նշված 4 անձանց կողմից կեղծ արտարժույթ պահելու, ձեռք բերելու, դրանք իրացնելու մասով նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերն ուղարկվել են դատարան:

Կեղծ արտարժույթ պատրաստելու մասով նախաքննությունը շարունակվում է, որի շրջանակներում իրականացված մեծածավալ գործողությունների արդյունքում պարզվել է ենթադրյալ հանցագործություն կատարած անձի ինքնությունը: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ վերջինիս հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու, ինչպես նաեւ հանցավոր շղթայում այլ անձանց մասնակցությունը պարզելու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԽՈՒՋԱՐԿԵԼ ԽՈՒՑԸ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեում ավարտական փուլ է մտել ԱԺ նախկին պատգամավոր Սուրեն Մանուկյանի կողմից ԱԺ նախկին պատգամավոր Խաչատուր Քոքոբելյանի հոր առեւանգման քրեական գործը: Նկատենք, որ Մանուկյանը արդեն 9 ամիս է, ինչ կալանքի տակ է, եւ նրա շուրջ օրերս ուշագրավ իրավիճակ է ստեղծվել: Իրավապահների որոշմամբ՝ ՀՅԴ ԳՄ անդամ, ԱԺ նախկին պատգամավոր Սուրեն Մանուկյանը «Արմավիր» ՔԿՀ-ից տեղափոխվել է «Երեւան-կենտրոն» քրեակատարողական հիմնարկ (ԱԱԾ):

Վերջին մեկ ամսվա ընթացքում, երբ Սուրեն Մանուկյանը գտնվել է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, բազմաթիվ անգամ քրեատարողական ծառայության բազմաթիվ ծառայողների կողմից ստուգումներ են իրականացվել այն սենյակում, որտեղ պահվել է Մանուկյանը՝ փորձելով գտնել նրա մոտ արգելված որեւէ առարկա, որով էլ կարող էին իբր հիմնավորել, որ Սուրեն Մանուկյանը խոչընդոտում է նախաքննության ընթացքին, ինչով հնարավոր կլիներ եւս մեկ անգամ երկարացնել նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը: Ուշագրավ է, սակայն, որ քրեակատարողական հիմնարկի ծառայողների կողմից այս ողջ ընթացքում իրականացված շուրջ տասնյակ ստուգումներից հետո Սուրեն Մանուկյանի մոտ եւ նրա խցում առհասարակ արտառոց ոչինչ չի հայտնաբերվել, սակայն, այնուամենայնիվ, նախաքննական մարմինը որոշել է նրան տեղափոխել ԱԱԾ-ի շենք՝ «Երեւան» քրեակատարողական հիմնարկ:

ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ

Ինչպես հայտնի է, անցած տարի՝ մայիսի 20-ին, ՀՀ քննչական կոմիտեն կալանավորեց Յուրի Խաչատուրովի որդուն՝ Իգոր Խաչատուրովին, որը 2 ամիս անց՝ կալանքի տակ մնալուց հետո՝ հուլիսի 11-ին, դատարանի դահլիճից ազատ արձակվեց՝ 1 միլիոն դրամ գրավի դիմաց: Ներկայումս նրա գործով դատական նիստերը շարունակվում են:

Հիշեցնենք, որ, ըստ նախաքննական մարմնի, 2022թ. մայիսի 17-ին՝ ժամը 08:30-ի սահմաններում, անհնազանդության ակցիա իրականացնող մի խումբ քաղաքացիներ փակել էին Երեւան քաղաքի Կիեւյան փողոցի 15 հասցեի դիմացի երթեւեկելի հատվածը՝ այդկերպ խոչընդոտելով այլ քաղաքացիների ազատ տեղաշարժը: Քիչ առաջ Կենտրոնի դատարանի դատավոր Տաթեւիկ Գրիգորյանը հրապարակեց որոշում, եւ նա արդարացվեց:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 8-ից 10-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 83 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔՆԵՐ

Տավուշի մարզպետարանի աշխատակազմը ղեկավարում է 2 ոլորտ՝ մարզի հանրակրթական դպրոցները եւ մարզի առողջապահական հիմնարկները: Այդ երկու ոլորտները Տավուշի մարզպետարանը ղեկավարում է համապատասխանաբար Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ու Առողջապահության նախարարությունների հետ համատեղ: Այդ ամենը նկատի ունենալով՝ հարկ է նշել, որ Տավուշի մարզպետարանի հաստիքացուցակը բավական ուռճացած է: Մարզպետարանից ստացված տեղեկատվությամբ՝ ըստ հաստիքացուցակի՝ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցների թիվը 88 է: Ներկայումս Տավուշի մարզպետարանում աշխատում է 75 մարդ, որից 68-ը քաղաքացիական ծառայող է, 13 հաստիք թափուր է: Տավուշի մարզպետարանից լրագրողիս հայտնել են, որ թափուր հաստիքների համալրմանը կանդրադառնան ներկայումս մարզպետարանում ընթացող կառուցվածքային փոփոխությունից հետո:

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԱՆՏԵՂՅԱԿ ԵՆ

Երեւանում մեծ թափով ընթանում է հիպոթեքային վարկով բնակարանային շինարարությունը, այդ ձեւով մայրաքաղաքում բնակարաններ են ձեռք բերում նաեւ մարզերի բնակիչները, այդ թվում՝ Տավուշի մարզի բնակիչներ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին գրավոր հարցում եմ ուղարկել՝ հարցնելով, թե Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում ներկայումս քանի ընտանիք է հիպոթեքով տուն կառուցում: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «ՀՀ Տավուշի մարզի աշխատակազմը սահմանամերձ բնակավայրերում տուն կառուցելու համար հիպոթեքի տրամադրման գործընթացում ներգրավված չէ: Տեղեկատվություն ստանալու համար դիմե՛ք համապատասխան գերատեսչությանը»:

ՈՉ ՄԻ ԽՈՍՔ՝ ՇՈՒՇԻԻ ՄԱՍԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը մայիսի 9-ի կապակցությամբ շնորհավորական ուղերձ է հղել, որտեղ, մասնավորապես, նշված է. «Հայրենական պատերազմի տարիներին ֆաշիզմի դեմ մղած պայքարում խորհրդային երկրի ժողովուրդների մեջ իր անգնահատելի ներդրումն ունեցավ նաեւ հայ ժողովուրդը: Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը ձեռք բերվեց նաեւ հայ քաջորդիների շնորհիվ: Շատերը զոհվեցին այդ պատերազմում, շատերն էլ վերադարձան հերոսի կոչումով ու պարգեւներով: Իսկ տարիներ անց պատմությունից մեզ հասած հերոսական օրինակները հարստացան նոր՝ մերօրյա հերոսների անուններով»: Նիկոլ Փաշինյանի հարսանիքի քավոր մարզպետի մայիսի 9-ի շնորհավորական ուղերձում ոչ մի խոսք չկա Շուշի քաղաքի, 1992 թվականին Արցախի միջնաբերդի ազատագրման մասին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՆՍՊԱՍԵԼԻ ԱՅՑ

«ՁԱՏԻԿ»-ՈՒՄ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն աշխատակազմի ներկայացուցիչների հետ միասին մայիսի 5-ին մշտադիտարկման չհայտարարված այց են իրականացրել Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության «Երեւանի «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (ՊՈԱԿ): Այդ մասին հայտնում են ՀՀ ՄԻՊ-ից:

Ուսումնասիրվել են հաստատության բնակելի տարածքը, սանիտարական եւ կոմունալ հարմարությունները, երեխաների խնամքի, բուժօգնության տրամադրման, սննդի կազմակերպման, աշխատակիցների, երեխաների իրավունքների եւ հիմնարար ազատությունների վիճակը եւ փաստաթղթերը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին ու կիրառելի չափանիշներին: Հատուկ ուսումնասիրվել են երեխաների սոցիալական ներառման, ընտանիքների եւ հարազատների հետ հաղորդակցության, երեխայի լավագույն շահի երաշխավորման հետ կապված հարցերը՝ տեղադիտման, դիտման, մասնագետների եւ երեխաների հետ զրույցի, առանձնազրույցների, փաստաթղթերի ուսումնասիրության մեթոդների կիրառմամբ:

Արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնց մի մասը համակարգային են եւ բնորոշ են երեխայի խնամք ու պաշտպանություն իրականացնող բազմաթիվ այլ հաստատությունների:

Այսպիսով, հաստատությունում, որպես երեխաների խնամք եւ պաշտպանություն իրականացնող կառույց, արձանագրվել են՝ պահպանված չէ անձնական տարածքի համար անհրաժեշտ բնակելի մակերեսը, մասնավորապես՝ սենյակներում առկա են իրար միացված կամ շատ մոտ տեղադրված մահճակալներ: Արձանագրվել են դեպքեր, երբ տղաների համար նախատեսված մասնաշենքում բավարար տարածք չլինելու պատճառով արական սեռի երեխաները ժամանակավոր տեղափոխվել են աղջիկների մասնաշենք: Սենյակներում բացակայել են կողապահարաններ, 3 կամ 4 անձի համար եղել է հագուստի միայն 1 պահարան, ընդ որում՝ կոտրված, օգտագործման համար ոչ ենթակա եւ առանց փականների: Ապահովված չէ առանձնացված պայմաններում երեխաների նեղ անձնական պահանջմունքները, կարիքները (անձնական հիգիենա) ինքնուրույն բավարարելու հնարավորություն: Օրինակ՝ զուգարանների դռների մեծ մասը չեն փակվում ներսից, լոգախցիկները սանհանգույցից առանձնացված են միայն միջնապատով, իսկ որոշ դեպքերում բացակայում է նաեւ միջնապատը: Սանիտարահիգիենիկ պայմաններն ապահովված չեն. հագուստի, այդ թվում՝ ներքնազգեստի լվացքն իրականացվում է առանց անհատականացման եւ անհրաժեշտ տեսակավորման՝ հանգեցնելով տարբեր երեխաների կողմից նույն հագուստը կամ ներքնազգեստը կրելու դեպքերի: Երեխաների համար առանձնացված խոհանոցում առկա բաժակները չեն համապատասխանել երեխաների թվաքանակին. թվով 14 երեխային հատկացված է եղել 6 բաժակ: Անկողնային պարագաների, սրբիչների, սանրերի անհատականացումն իրականացվում է առանց համապատասխան նշումների: Հաստատությունն ապահովված չէ երեխաների տարիքային խմբերի առանձնահատկություններին համապատասխանող անվտանգ, կարիքահեն եւ զարգացման համար անհրաժեշտ պայմաններով: Դասապատրաստման գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ տարածք եւ համապատասխան կահույք հատկացված չէ, երեխաների առօրյան կազմակերպելու համար նախատեսված չեն տարիքային առանձնահատկություններին եւ հետաքրքրություններին համապատասխան ծրագրեր: Արդյունքում, դպրոցահասակ երեխաները ստիպված են դասապատրաստում իրականացնել փոքրահասակ երեխաների քնելուց հետո: Բացակայում են հաստատությունից դուրս սպորտային եւ մշակութային միջոցառումներին, խմբակներին հաճախելու հնարավորություն ապահովող ծրագրեր: Հաստատության ներսում, որպես հիմնական զբաղմունքի միջոց, օգտագործվում է հեռուստացույցը, որն այցի ամբողջ ընթացքում աղջիկների խմբում միացված է եղել բարձր ձայնով եւ երեխաների տարիքին, զարգացման հնարավորություններին ոչ համապատասխան բովանդակությամբ, իսկ տղաների խմբում վահանակի անսարքության պատճառով չի միացվել շուրջ 2 ամիս: Ներդրված չէ երեխաներին վերաբերելի հարցերում վերջիններիս մասնակցության, լսված լինելու իրավունքի ապահովման, ինչպես նաեւ բողոքարկելու իրավունքի իրացման իրական հնարավորություն, մասնավորապես՝ բողոքների եւ առաջարկությունների համար նախատեսված արկղը դրված է հաստատության վարչական աշխատանքների համար նախատեսված հատվածում, որի մասին երեխաները տեղյակ չեն:

Արձանագրվել են երեխայի եւ ընտանիքի հետ շփման ապահովման, ընտանեկան կապերի պահպանման վրա ազդեցություն ունեցող միջամտության դեպքեր: Մասնավորապես՝ երեխաների եւ ծնողների տեսակցությունները, հեռախոսային խոսակցությունները հաճախ տեղի են ունեցել աշխատակիցների ներկայությամբ: Շենքային պայմանները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին: Այցի պահին հաստատությունում բացակայել է առաջին բուժական օգնության պայուսակը, բժշկական ծառայությունների համար նախատեսված տարածքում միակ գործող սենյակը միաժամանակ ծառայում է որպես ընդունարան, բժշկի աշխատասենյակ եւ հերթապահ բուժքրոջ հանգստի սենյակ: Ներդրված չէ նաեւ երեխաների բժշկական փաստաթղթերի վարման միասնական ձեւաչափ:

Ապահովված չէ տրանսպորտային միջոցով երեխաների փոխադրումների կազմակերպերպումը, ինչը էապես սահմանափակում է նաեւ հասարակության հետ շփումները: Առկա են խնդիրներ երեխային խնամատար ընտանիք հանձնելու եւ խնամքը կազմակերպելու գործընթացում: Օրինակ՝ գրանցվել են դեպքեր, երբ նույն երեխայի խնամքը 2 անգամ տարբեր խնամատար ընտանիքներում է կազմակերպվել, սակայն որոշ ժամանակ անց այդ ընտանիքները հրաժարվել են երեխայի խնամքը իրականացնելուց, ինչը հոգեբանական տեսանկյունից երեխայի վրա բացասաբար է ազդել:

Երեխաների եւ աշխատակիցների հետ առանձնազրույցների ընթացքում վերջիններս հայտնել են աշխատակիցների կողմից երեխաների նկատմամբ, երեխաների կողմից աշխատակիցների նկատմամբ եւ երեխաների միջեւ ֆիզիկական ու հոգեբանական բռնության դրսեւորումների մասին:

Առկա չէ երեխաների հանդեպ եւ նրանց միջեւ բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման եւ իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների վարման գրանցամատյան:

Ճաշարանում ու խոհանոցում արձանագրվել են աշխատանքի կազմակերպման խնդիրներ: Խոհանոցում առկա է անձակազմի անհամաչափ ծանրաբեռնվածություն ու գործառույթների միաձուլում: Այցի ընթացքում պատրաստված ուտեստների չափաբաժիններըեւ սնվելու ժամերը հստակ նշված չեն եղել: Պահպանված չեն եղել նաեւ սննդի նմուշառման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները: Հայտնաբերվել են ժամկետանց ալյուր եւ կարմիր պղպեղ, հիգիենայի եւ մաքրման միջոցներ, ինչպես նաեւ խոհանոցի սառցարանում առկա մսամթերքի վրա բացակայել է ժամկետների նշումը:

Աշխատակիցների աշխատանքային պայմաններն անբավարար են, եւ առկա է աշխատակիցների ռեսուրսների պակաս:

Արձանագրված խնդիրները Պաշտպանի ներկայացուցիչները քննարկել են հաստատության տնօրինության հետ:

Խնդիրները կամփոփվեն, եւ դրանք արտացոլող փաստաթուղթը՝ արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկների հետ մեկտեղ, կներկայացվի ոլորտի իրավասու մարմիններին:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Այս տարվա առաջին երեք ամսվա ընթացքում՝ հունվար-մարտին, արտասահմանից Հայաստան է այցելել 451 850 զբոսաշրջիկ:

Եթե այս թիվը համեմատենք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ, ապա նշենք, որ նրանց թիվն աճել է 202 489-ով կամ 81.2%-ով: ArmLur.am-ը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից տեղեկանում է, որ Հայաստան այցելած զբոսաշրջիկների մեծ մասը ՌԴ քաղաքացիներն են: Երկրորդ տեղում են տարբեր երկրներից Հայաստան այցելած հենց Հայաստանի քաղաքացիները՝ 74 հազար 186 մարդ: Հետաքրքիր է, որ ավելացել է նաեւ Հայաստան ժամանած Վրաստանի քաղաքացիների թիվը՝ 53 707՝ նախորդ 24 158 մարդու փոխարեն:

Հետաքրքիր է, որ 2023 թվականի հունվար-մարտ ամիսներին Հայաստան է այցելել նաեւ Թուրքիայի 2712 քաղաքացի, ինչը 1244 մարդով ավելի է, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածինը: 2022 թվականի առաջին 3 ամսում Ադրբեջանի 3 քաղաքացի էր ժամանել Հայաստան, այս տարի դեռ նման թիվ առկա չէ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● Անցած 2 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 22 ճՏՊ. 32 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԿՆԱԾՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2023 թ. մայիսի 30-ին, ժամը 12:00-ին «Տաթվան» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, սենյակ 311 սենյակ հասցեում կանցկացվի «Տաթվան» ՍՊ ընկերության պատկանող գույքերի աճուրդ վաճառքը

ԼՈՏ 1. ԳԱԶ 322132-220 մակնիշի 558 LS 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում): Մեկնարկային գինը կազմում է 106,630 ՀՀ դրամ:

ԼՈՏ 2. ԳԱԶ 322132 մակնիշի 455 OC 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):Մեկնարկային գինը կազմում է 37,057 ՀՀ դրամ:

ԼՈՏ 3. ԳԱԶ 322132-220 մակնիշի 332 LL 62 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):Մեկնարկային գինը կազմում է 79,608 ՀՀ դրամ:

ԼՈՏ 4. ԳԱԶ 32213 մակնիշի 775 AD 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում): Մեկնարկային գինը կազմում է 77,778 ՀՀ դրամ:

ԼՈՏ 5. ԳԱԶ 322132 մակնիշի 843 LS 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում): Մեկնարկային գինը կազմում է 46,323 ՀՀ դրամ:

ԼՈՏ 6. ԳԱԶ 322132 մակնիշի 331 LL 62 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում): Մեկնարկային գինը կազմում է 70,412 ՀՀ դրամ:

ԼՈՏ 7.ԳԱԶ 322132-220 մակնիշի 213 LV 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում): Մեկնարկային գինը կազմում է 12,968 ՀՀ դրամ:

ԼՈՏ 8. ԳԱԶ 322132-220 մակնիշի 333 LL 62 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում): Մեկնարկային գինը կազմում է 119,483 ՀՀ դրամ:

ԼՈՏ 9. ԳԱԶ 32213 մակնիշի, 332 OT 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):Մեկնարկային գինը կազմում է 118,617 ՀՀ դրամ:

ԼՈՏ 10. ԳԱԶ 322132-220 մակնիշի , 288 LD 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում): Մեկնարկային գինը կազմում է 36,713 ՀՀ դրամ:

ԼՈՏ 11. ԳԱԶ 322132-220 մակնիշի 215LV61 պետական համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):Մեկնարկային գինը կազմում է 31,064 ՀՀ դրամ:

ԼՈՏ 12. ԳԱԶ 32213- մակնիշի, 340 AG 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):Մեկնարկային գինը կազմում է 107,162 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով «Տաթվան» ՍՊԸ սնանկության հատուկ հաշվին՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի «Նոր Արեշ» մասնաճյուղ 1150014223993952 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարան /ք. Երեւան. Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԿԱՄԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՖՈՐՁ

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը Ազգային ժողովում քննարկման ներկայացրեց «Կամավոր աշխատանքի մասին» օրենքի նախագիծը, որով կկարգավորվեն կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները, կսահմանվեն կամավոր աշխատանքի հետ կապված սկզբունքները: Ազգային ժողովում խորհրդարանական լսումների ժամանակ համապատասխան օրենքի նախագիծը ներկայացրեց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը՝ նշելով, որ օրենքը կսահմանի կամավոր աշխատանքի սուբյեկտները, նրանց հիմնական նպատակները, իրավունքներն ու պարտականությունները, կամավոր աշխատանքի հետ կապված ծախսերի վճարման, ինչպես նաեւ կամավոր աշխատանքի կատարման իրավական հիմքերն ու այլ առանձնահատկությունները:



«Տարբեր շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում բերել ենք մի նախագիծ, որը հնարավորություն կտա արդեն օրենսդրական մեխանիզմների միջոցով օժանդակել եւ զարգացնել կամավոր գործունեությունը Հայաստանում:

Բարեբախտաբար, կամավորության գաղափարախոսությունը Հայաստանում զարգացել է շատ շուտվանից՝ չսպասելով օրենսդրական կարգավորումներին»,- նշեց Սարգսյանը:

Նախարարի տեղակալի խոսքով՝ «Կամավոր աշխատանքի մասին» օրենքի ընդունման, մշակման փորձը դեռեւս սկսվել է 2006 թվականից, սակայն տարբեր պատճառներով Ազգային ժողով չի հասել:

«Օրենքի ընդունումը կնպաստի երկրում կամավոր ինստիտուտի կայացմանը, «կրթություն-աշխատաշուկա» արդյունավետ փոխառնչությանը, որակյալ աշխատուժի ձեւավորմանը, աշխատաշուկայի մրցակցության բարձրացմանը, կաջակցի աշխատաշուկա մուտք գործող անձանց աշխատաշուկայի միտումներին ծանոթանալուն եւ աշխատաշուկայում ինտեգրվելուն, բնակչության կյանքի որակի բարձրացմանն ու կենսակերպի բարելավմանը, ինքնակազմակերպվող ու քաղաքացիական ակտիվ հասարակություն ձեւավորելուն, կաջակցի անձի՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը կամ այդ վիճակից դուրս բերելուն կամ սոցիալական ներառմանը»,- ասաց Սարգսյանը:

Նախարարի տեղակալը ներկայացրեց նաեւ կամավոր ինտիտուտի առկա իրավիճակը՝ ընդգծելով, որ ներկայումս բացակայում են կամավորին անօրինական եւ վարձու աշխատողին տարանջատելու հիմքերը, հնարավոր չէ տարանջատել կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերություններն աշխատանքային հարաբերություններից, կամավորները չունեն իրավական կարգավիճակ եւ այլն:

«Այս նախագծով ամրագրվում են մի քանի սկզբունքներ. կհիմնավորվեն կամավորությամբ զբաղվելու փաստը եւ փորձառությունը, սույն օրենքով սահմանված կարգով կատարված կամավոր աշխատանքի ժամանակահատվածը կամավորի համար կհամարվի աշխատանքային փորձառություն, կամավորը կունենա իրավական կարգավիճակ, կհատուցվեն նրա ծախսերը, կերաշխավորվեն առողջությունը եւ անվտանգությունը եւ այլն»,- ասաց Սարգսյանը:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» Գ

ՅՈՒՆԻԲԱՆԿ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ

ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Թողարկողի անվանումը՝ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն:

Առաջարկվող արժեթղթերի դասը, ծավալը և այլ հիմնական տվյալները	
Արժեթղթերի դասը	Սովորական բաժնետոմս
Արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային
Բաժնետոմսերի քանակը	15,000,000 հատ
Մեկ բաժնետոմսի տեղաբաշխման արժեքը	300 ՀՀ դրամ
Բաժնետոմսերի ընդհանուր արժեքը՝ տեղաբաշխման գնով	4,500,000,000 ՀՀ դրամ

Հրապարակային առաջարկի նախատեսվող ժամանակահատվածը

Տեղաբաշխումը սկսելու հստակ օրը կհրապարակվի Բանկի կայքում տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

Բաժնետոմսերի հրապարակային առաջարկը մեկնարկել է սույն Ազդագրի՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցմանը հաջորդող 3-րդ աշխատանքային օրը և տևելու է մինչև 22 աշխատանքային օր:

Ազդագիրը հրապարակվել է «Յունիբանկ» ԲԲԸ-ի կայքում 08.05.2021թ.-ին:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում (ք.Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5) և մասնաճյուղերում (հասցեները տես բանկի ինտերնետային կայքում՝ www.unibank.am), իսկ էլեկտրոնային պատճենը՝ «Յունիբանկ» ԲԲԸ-ի ինտերնետային կայքում՝ www.unibank.am:

Ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցվել է 03.05.2021թ.-ին ՀՀ ԿԲ թիվ 1/226Ա որոշման համաձայն :

«Յունիբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԵԿՆԱՐԿ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄ

ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում առաջին դասարանցիների հայտագրման գործընթացը կմեկնարկի հունիսի 12-ից եւ կիրականացվի 3 փուլով:

Այս տարի եւս հայտագրման գործընթացն իրականացվելու է ԿԳՄՍ նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից վարվող «Սովորողներին դպրոց հայտագրելու էլեկտրոնային համակարգի» միջոցով:

Առաջին փուլով հունիսի 12-ից հայտագրումը բաց կլինի բոլոր այն քաղաքացիների համար, որոնք ունեն որոշակի արտոնություններ:

ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու եւ ազատելու կարգի» համաձայն՝ սովորողների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն տրվում է՝

- տվյալ դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաներին եւ տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաներին (այս կետի արտոնությամբ հայտագրումը կշարունակվի մինչեւ հունիսի 25-ը ներառյալ),
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ տվյալ դպրոցից մինչեւ տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվող՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների, խնամակալության տակ գտնվող, հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաներին,
- տվյալ ոլորտային օրենսդրությանը համապատասխան՝ ՀՀ տարածքում ներքին գործուղման հետեւանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաներին:

Վերջին երկու կետերի դեպքում ժամկետային սահմանափակում չի գործում, եւ համապատասխան հիմքերի առկայության դեպքում ծնողը դիմում է ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ երեխային հաստատություն ընդունելու համար:

Վերը նշված արտոնություններից կարող են օգտվել ինչպես հայերենով, այնպես էլ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում հայտագրվողները:

Երկրորդ փուլով հունիսի 27-ից առաջին դասարանցիների հայտագրման գործընթացը կիրականացվի ընդհանուր հիմունքներով՝ հայերենով ուսուցում իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների բոլոր առաջին դասարանցիների ընդունելության համար:

Երրորդ փուլով հուլիսի 4-ից հայտագրում կիրականացվի նաեւ օտարերկրյա քաղաքացիների, երկքաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (նրանց օրինական ներկայացուցչի) համար: Այն դեպքում, երբ ծնողներից մեկը թվարկված որեւէ խմբի ներկայացուցիչ է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, հայտագրումը կարող է կատարվել ծնողի ընտրությամբ՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում: Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդգրկումը դպրոց կատարվում է սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը:

Հայտագրումը կշարունակվի ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Նշենք, որ երկյակ, եռյակ, քառյակ եւ ավելի երեխաներից առնվազն մեկի հայտագրումը որեւէ հանրակրթական ուսումնական հաստատությունում ապահովում է մյուս երեխաների ընդունելությունը նույն հաստատություն՝ անկախ լիցենզիայով տրված տեղերի սահմանափակումից:

Հավելենք, որ, որպես հայտագրման առաջին քայլ, նախ պետք է ստուգել երեխայի տվյալների ամբողջականությունը: Այս նպատակով ԿՏԱԿ-ը գործարկել է https://stugum.emis.am/ կայքը, որտեղ դպրոց ընդունվող երեխայի ծնողները կարող են ստուգել երեխայի անձնական տվյալների առկայությունն ու ճշգրտությունը: Այս քայլն անհրաժեշտ է բուն հայտագրման գործընթացը սկսելու եւ հնարավոր խնդիրներից խուսափելու համար:

«ԵՎՐԱՏԵՍԻԼ 2023»

ԻՆՉՊԵ՞Ս Է ԲՐՅՈՒՆԵՏԸ ԵՐԿՐՊԱԳՈՒՄ ՄՐՑԱԿԻՑՆԵՐԻՆ

Մայիսի 9-ին ավարտվեց «Եվրատեսիլ 2023»-ի առաջին կիսաեզրափակիչը: Հաջորդ կիսաեզրափակչում, որը կայանալու է մայիսի 11-ին, դայֆարը կշարունակեն հետեւյալ երկրների ներկայացուցիչները՝ Նորվեգիա, Խորվաթիա, Մոլդովա, Շվեյցարիա, Ֆինլանդիա, Չեխիա, Իսրայել, Պորտուգալիա, Շվեդիա, Սերբիա:

ArmLur.am-ը ներկայացնում է կադրեր, թե ինչպես էր հայկական պատվիրակության ներկայացուցիչ Բրյունետը դահլիճում նստած երկրպագում իր մյուս մրցակիցներին:

Նշենք, որ Հայաստանը ներկայացնող Բրյունետը ելույթ կունենա 2-րդ կիսաեզրափակչում՝ մայիսի 11-ին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Կոտայքի մարզ, համայնք Ձրվեժ, գյուղ Ձրվեժ, 3-րդ դաշտ, 9-րդ հատված, 7 հասցեում գտնվող 101,6 ք.մ. շինություն եւ 0,1506 հա հողամաս /առկա են ինքնակամ կառույցներ՝ 47,08 ք.մ., 32,9 ք.մ., ինքնակամ շինություն՝ 21,1 ք.մ., ինքնակամ ջրավազաններ՝ 8,0 ք.մ., 6,5 ք.մ., ինքնակամ ծածկ՝ 43,85 ք.մ.եւ ինքնակամ պարիսպ՝ 13,6 ք.մ./: Լոտի մեկնարկային գինը՝ 179950000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 29.05.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲիէսԹի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

● *Մայիսի 12-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Առռը հա՛ Շեքսպիր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՎԱՐԿԵՐ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որքան ժամանակ է պահպանվում անձի վարկային պատմությունը: Եվ հետաքրքիր է իմանալ՝ բացի վարկառուից, ով կարող է տեղեկանալ անձի վարկային պատմության մասին:

Սիրանույշ Պետրոսյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթների՝ «վարկային բյուրոյի կողմից տրամադրվող վարկային զեկույցներում չպետք է ներառվի վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն»:

Վարկառուի կողմից տրված գրավոր համաձայնության դեպքում վարկառուի վարկային պատմության մասին կարող են տեղեկանալ վարկառուի մասով դրամական պահանջներ, օրինակ՝ տրամադրված վարկերի մասով դեբիտորական պարտավորություններ ունեցող սուբյեկտները կամ վարկառուի գործատուն աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելիս:

Առանց վարկառուի համաձայնության վարկային բյուրոն կարող է օրենքով նախատեսված դեպքերում տեղեկատվություն տրամադրել Կենտրոնական բանկին, ինչպես նաեւ դատարանին՝ դատական որոշման հիման վրա:

«ԱԲՈՒ» վարկային բյուրո

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթների՝ «վարկային բյուրոյի կողմից տրամադրվող վարկային զեկույցներում չպետք է ներառվի վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն»:

ԷՋԸ՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ԵՏՄ անդամ պետություններից ԵՏՄ արտադրության ավտոմեքենայի ներմուծման դեպքում վճարման ենթակա ավելացված արժեքի հարկն ինչ ժամկետում պետք է վճարել:

Կարեն Իսահակյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կ. Իսահակյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջեւ անուղղակի հարկերի հաշվարկման եւ վճարման առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ներմուծվող ապրանքների համար հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչեւ ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք փաստացի ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրը ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ներմուծվող ապրանքների համար հաշվարկված ԱԱՀ-ի եւ ակցիզային հարկի գումարները սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում այդ գումարների նկատմամբ հաշվարկվում են տույժեր՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

44-օրյա պատերազմում զոհված հերոս Տիգրան Պողոսյանին եւ բոլոր անմահացած հերոսներին նվիրված նոր հուշակոթող է բացվել Աբովյան 22 ա շենքի բակում: Հուշակոթողի հեղինակն է Կամսար Վարդանյանը, ում որդին նույնպես անմահացել է 44-օրյա պատերազմում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 5 + 9 +16 + 21
Կոտայքի լեռներ	+ 5 + 8 +17 + 21
Կոտայքի նախալեռներ	+ 10 + 12 +20 + 23
Գեղարքունիք	+ 5 + 8 +17 + 21
Լոռի	+ 6 + 10 +18 + 22
Տավուշ	+ 9 + 12 +23 + 25
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +17 + 21
Արագածոտնի նախալեռներ	+ 9 + 13 + 21 + 26

Արարատ	+ 13 + 16 +23 + 26
Արմավիր	+ 12 + 15 +26 + 28
Վայոց ձորի լեռներ	+ 4 + 7 +18 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 12 + 15 +27 + 29
Սյունիքի հովիտներ	+ 12 + 15 +27 + 28
Սյունիքի նախալեռներ	+ 3 + 6 +17 + 20
Արցախ	+ 11 + 15 +23 + 27
Երեւան	+ 12 + 15 +25 + 27

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.5.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*